# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

06/401
07.09.2016թ.

*ՀՀ ԿԱ <<ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>ՊՈԱԿ-Ի ՊԵՏ*
*պարոն Մ. ԱՆԱՆՅԱՆԻՆ*

**Հարգելի պարոն Անանյան**

Ի պատասխան Ձեր 24.08.2016թ.-ի N01/04.2/3187-16 գրության տեղեկացնում ենք, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն ընդունվել է ի գիտություն և կատարվել է մասնակցի հայտի վերագնահատում:

Կից ներկայացնում ենք հանձնաժողովի 05.09.2016թ.-ի թիվ 4 արձանագրությունը:

Առդիր՝ 3(երեք) էջ:

*ՌԵԿՏՈՐ՝* *Ա.ԼՈՔՅԱՆ*

*կատ.ֆին.տնտեսական վարչություն*
*հեռ.22-26-20*

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀՊԿԱ – ՇՀԱՊՁԲ-15/8-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրով
ընթացակարգի հայտերի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 05 սեպտեմբերի 2016թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ.Ադամյան - ՀՀՊԿԱ տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր

Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Հովհաննիսյան –ՀՀՊԿԱ, անձնակազմի կառավարման բաժնի պետ

Ս.Գաբոյան - ՀՀՊԿԱ, տնտեսական բաժնի պետ

Ա.Դավթյան- ՀՀՊԿԱ, տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման բաժնի պետ

Ա.Եղիազարյան – ՀՀՊԿԱ, հաշվապահ

Քարտուղար՝ Կ.Սերոբյան – ՀՀՊԿԱ,գլխ.հաշվապահ տեղակալ, գնումների գործընթացի համակարգման պատասխանատու

1. Տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա, ժամի մասին

1.1 Գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայում( ք.Երևան, Կինյան-8 , 39 սենյակ), հուլիսի 22-ին ժամը 10:00-ին:

2.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և հասցեները

2.1 Գնային առաջարկներ են ներկայացրել հետևյալ մասնակիցները

| Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը |
|---|---|
| «Լանար սերվիս» ՍՊԸ | ՀՀ, ք.Երևան, 0002, Մաշտոցի պող.27, բն 11, հեռ 374 10 53-93-11 |
| «Ֆիրմա ալֆա» ՍՊԸ | ՀՀ, ք.Երևան 0025, Խանջյան փող.50 «Թեքեյան բիզնես կենտրոն» Հեռ 374 10 52-13-56 |

3. Տվյալներ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերով սահմանված պահանջների համապատասխան:

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

## 5. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

5.1 Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

## 6. Գնման ընթացակարգը կասեցնելու վերաբերյալ որոշում

6.1 Քանի որ հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները գերազանցում էին գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն և 30.01.2015 թ N 105-Ն որոշումներով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) VII-րդ մասի 44-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերություններով և «ՀՀ ՊԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8- 16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի I-ին մասի 7.2 կետի 5-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերություններով՝ առաջին և երկրորդ տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստը կասեցվել էր, քանի որ բացման նիստին ոչ բոլոր մասնակիցներն էին ներկա և առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ անցկացվելու էր միաժամանակյա բանակցություններ:

6.2 Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն և 30.01.2015 թ N 105-Ն որոշումներով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) VII-րդ մասի 44-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ և «ՀՀ ՊԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8- 16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի I-ին մասի 7.2 կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ **բանակցությունների օր, ժամ և վայր էր սահմանել ոչ շուտ, քան Մասնակիցներին ծանուցումն ուղարկվելու օրվան**(22.07.2016թ) **հաջորդող օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը, որն էր 2016թ. հուլիսի 26-ը ժամը 16:00-ն՝ ՀՀ ք.Երևան, Կիևյան 8, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դահլիճ:**

## 7. Մասնակիցների առաջարկած (բանակցված) գները

| Չ/բաժնի համարը | Ապրանքի անվանումը | Չափման միավորը | Գնի առաջարկները / ՀՀ դրամ / | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | «Լանար սերվիս» ՍՊԸ | | | «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ | | |
| 1 | Ինտերակտիվ պրոեկտոր | հատ | Ինքնարժեք և շահույթ | ԱԱՀ | Ընդամենը | Ինքնարժեք և շահույթ | ԱԱՀ | Ընդամենը |
| | | | 679166.7 | 135833.3 | 815 000 | 683333.3 | 136666.7 | 820 000 |

7.1 **Ըստ չափաբաժինների առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրել են համապատասխանաբար.**

*1-ին չափաբաժին*

1-ին տեղ - «Լանար սերվիս» ՍՊԸ

2-րդ տեղ - «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ

## 8.Բողոքարկում

8.1 «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գնման ընթացակարգի հանձնաժողովի՝ ընտրված մասնակից ճանաչելու որոշման, վերաբերյալ 05.08.2016թ-ին բողոք է ներկայացրել ՀՀ Կառավարության աշխատակազմի «Գնումների աջակցման կենտրոն»: Ի կատարումը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 23.08.2016թ. **թիվ 82/16 որոշման՝** «ՀՀՊԿԱ – ՇՀԱՊՁԲ-15/8-16/16» ընթացակարգի հանձնաժողովը ***վերագնահատեց*** «Լանար սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը և գնահատեց այն **անբավարար**:

## 9.Արձանագրվեց

9.1 Հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 23.08.2016թ-ի թիվ 82/16 որոշումը՝ և համաձայն ՀՀ Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 49-րդ, 51-րդ և 52-րդ կետերի գնահատող հանձնաժողովը որոշեց առաջին տեղ գրաղեցրած մասնակից ճանաչել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին: Առաջին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջել ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափորոշիչները հիմնավորող փաստաթղթերը:

## 10.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

10.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 9.1 կետում նշված փաստաթղթերը ստանալուց հետո հաջորդ աշխատանքային օրը ժամը 10:00-ն:

**Հանձնաժողովի նախագահ՝** Գ.Ադամյան

**Հանձնաժողովի անդամներ՝** Ա.Հովհաննիսյան

Ս.Գաբոյան

Ա.Դավթյան

Ա.Եղիազարյան

**Քարտուղար՝** Կ.Սերոբյան